

օրը Ալեքսանդր II-ը այդ միտքը Լօրիս-Մէլի-քով կամենում էր ներշնչել և երիտասարդ Թա-գաւորին (Ալեքսանդր III), իբրեւ սրբազան ժա-ռանգութիւն: Բայց Լօրիս-Մէլիքովի մտադրութիւնը իր կողմն ունէր նոր Թագաւորի անվերապահութիւնը և նրա հոգեկան տրամադրութիւնը մարտի 1-ին յետոյ:

«Այս այդ մտադրութիւնը, հենց այն րօպէին, երբ նա համարվում էր իրագործելի, ոչնչացրին, ի մեծ երջանկութիւն Ռուսաստանի, երկու մարդ:—Կատիօվ եկաւ Մոսկովայից և ուղիղ դը-նաց Պոբէդոնոսցիով ժողովի, յիշեցրեց նրան Ռու-սաստանի անուանից նրա պարտաւորութիւնը՝ ա-մեն բան մոռանալ և ամեն բան համարձակել, ոչնչացնելու համար այն դաւադրութիւնը, որի աջողութիւնը պէտք է թուականներ իշխանու-թեան սկզբունքը: Պոբէդոնոսցիով իսկայն գնաց Անիչկով պալատը և իր առաջին հայրենասիրա-կան խորհուրդը առեց երիտասարդ Թագաւորին: Այդ խորհրդի հետանցը եղաւ Ալեքսանդր III-ի յայտնի հրովարտակը:

Իբրեւ պատասխան այդ յօդուածի, օրէք-պո-կուրօր Պոբէդոնոսցիով մի նամակ է ուղղել իշ-խան Մէլիքովին, որի մէջ, ի միջի այլոց, հե-տեանք է ասոււմ.

«Ես սովորութիւն չունեմ իմ մասին հրապա-րակով խօսելու, բայց որովհետեւ գործը վերա-բերում է պատմական դէպքերի մէջ ունեցած իմ մասնակցութեան, ուստի այս անգամ պարտք եմ համարում վերականգնել ճշմարտութիւնը և ուղղել իրական անձնութիւնները:

1) Բոլորովին անճիշդ է, երբ անձնագրէս ինձ է վերաբերում կոսմ Լօրիս-Մէլիքովի կազմած ծրագրի ստացումը: Նա ստացւելից մինիստը-նրի խորհրդի նիստում, որ կայացաւ 1881 թվ. մարտի 8-ին, Թագաւոր Կայսրի ներկայութեամբ: Այդ նիստում ես յայտնեցի իմ կարծիքը, իբրեւ հերքում Լօրիս-Մէլիքովի ծրագրի, մի կարծիք, որ վաղուց յայտնի էր և իրան Լօրիս-Մէլիքովին, բայց այդ կարծիքը միայն ես չարտայայտեցի, այլ և խորհրդակցութեան մի քանի ուրիշ ան-դամները: Այդ կարծիքի հետ բարեհաճեց համա-ձայնվել Թագաւոր Կայսրը, որ և յայտնեց նոյն նիստում:

2) Բոլորովին անճիշդ է, երբ Կատիօվին վե-րաբերում է եռանդուն մասնակցութիւն այդ վճռի մէջ, ինչպէս և այն, որ իբրեւ ինձ վրա նա ազդեցութիւն է գործել: Կատիօվի հետ ես այդ ժամանակ որ և է տեսակցութիւն չեմ ու-նեցել: Հանգուցեալ Թագաւոր Կայսրը մի քանի անգամ յայտնել էր կոսմ Լօրիս-Մէլիքովին, թէ անհրաժեշտ է յայտնել ի գիտութիւն ամբողջ ժողովրդի Նորին Մեծութեան հաստատ կամքը՝ անձեռնմխելի պահելու կառավարութեան հիմ-նական սկզբունքները ինքնակալութեան հիման վրա, բայց կոսմ Լօրիս-Մէլիքովը ուշացնում էր, չը նայելով, որ անդադար յիշեցնում էին: Այն ժա-մանակ Նորին Մեծութիւնը բարեհաճեց յանձնել

նի և բաժանի պարզեցնել ու պատիժներ մարդ-կանց մէջ: Հասարակ ժողովուրդը, որ դրուշնե-րի մէջ յայտնի է ջօխալ անունով, չէ հետե-ւում կրօնական պահանջներ և ծէսեր կատարե-լուն՝ նա չը գիտէ աղօթք, ծոմ, պատ ժողովը-ղի միւս, աւելի պատրաստված, կրօնին նուիր-ված մասը, մի տեսակ ուղտեակների դասակար-գը, որ յայտնի է ակկալ անունով, հետեւում է կրօնի պահանջներին և կատարում է աղօթքներ և ծէսեր:

Հաս ուժեղ և բուռն կերպով է պահանջվել ազատասիրութեան և անկախութեան զգացումները դրուշներին մէջ: Լեռները զիւրացրել են նրանց համար հայրենասիրական կոիւններ մղելը և տա-րիներին ընթացում մաքառումներ առաջ տանե-լը: Երբեք դար սրանից առաջ նրանք իսկապէս չէին ընդունում ոչ մի գերիշխանութիւն և ոչ մի հարկ չէին տալիս ոչ ոքին: Միացած իրանց հարեան մարտիտների հետ, նրանք երկար դա-րեր մաքառել են դանադան նորեկ տարրերի՝ մամուլի, կրթի, թիւրքերի, ինչպէս իսկ իսլամիկ-ներին զէմ: Սակայն տասն և վեցերորդ դարի վեր-ջերում, սովորան Ամուրդի օրով, թիւրքաց կառավարութիւնը այնքան ընկճեց նրանց, որ նրանց վրա նշանակեց մի օրոշ տուրք, որը նը-րանք պարտաւոր էին կանոնաւոր կերպով հա-տուցանել:

Առաջ դրուշներն իրանք էին ընտրում իրանց

ինձ մանիֆէստ պատրաստելը, որը և ես կա-տարեցի:

ՆՆՐԻՒՆ ԼՈՒՐԻՍ

Երբեք հոգի մեղ խնդրում են տպագրել հե-տեանքը: «Թիւրքիայից եկած հայ զաւթականնե-րը ստիպված են թափառել փողոցներում, չու-նենալով որ և է տեղ ապաստանելու, և հաւա-քում են նոյն իսկ վանքի մայր-եկեղեցու բա-զից, որտեղ նրանք զինում են մի տեղ գտնելու յոյսով: Կարծում ենք, որ մեր եկեղեցիներին և ծխական համայնքների բարոյական պարտակա-նութիւնն է այդ թշուառներին առ ժամայ ա-պաստարան տալ և օգնել նրանց, մինչև որ կը կարողանան իրանց համար որ և է գործ ձարել և ոտքի կանգնել և ոչ թէ զեռ եկեղեցիների բազերից էլ հաւածել նրանց:

Երէկ, յուլիսի 5-ին, դատաստանական պալա-տում չը քննվեց խմբագիր Սպանդարտի գնա-գատը Խ. Մարտիկանի դէմ: Ընթացիկ գործերի շտաբի կողմից պատճառով, յետաձգվեց և պէտք է քննվի այսօր, յուլիսի 6-ին, առաւօտեան 10 ժամին:

Ամսիս 4-ին, հինգշաբթի, ժամը 2-ին, երկա-թուղու արտակարգ գնացքով Մցիխից Թիֆլիս հասաւ հաղորդակցութեան ճանապարհների մի-նիստը: Օգնական զինեղալէյտընանտ Պետրով: Երէկ, յուլիսի 5-ին, մինիստրի օգնականը այցե-լութիւն տալով կովկասեան կառավարչապետի պաշտօնակատար զինեղալ Ամիրխանովին, երե-կայեան ժամը 8-ին արտակարգ գնացքով, անդը-կովկասեան երկաթուղու կառավարչի վէճէ-նէլով ընկերակցութեամբ, մեկնեց Քուրմայի, որ-տեղից ձիով պէտք է գնաց մինչև Աջամէտի կա-մուրջը՝ քննելու համար այն տեղերը, որոնց վրայով Գուրիայի զորքային վարչութիւնը միջնորդում է երկաթուղի անցկացնել: Մինիստրի օգնականը պէտք է հետազօտի և ճանապարհի այն ամբողջ տարածութիւնը, որը ենթարկվել է աւերումներին, վերջին հեղեղների պատճառով:

«Кавказ» լրագիրը հաղորդում է, որ յուլիսի 4-ին, Թիֆլիսի նահանգական ատեսանը զննելով մի քանի արհեստաւորների կողմից Թիֆլիսի նահան-գապետին ներկայացրած բողոքը՝ նորերս արհես-տաւորների աւագ ընտրված Սերգեյանցի ընտ-րութեան անկանոնութեան մասին, անհետանք է թողել այդ գանգատը և հաստատել է Սեր-գեյանցին արհեստաւորների աւագի պաշտօնում:

Պատասխան վարչութիւնը մտադրել է մայցնել արտասահմանում ընդունված ձեռն-առ զբա-մանք և ծրարներն առանց ուստիկանութեան և այլ վկայութիւնների պահանջելու, այլ բաւակա-նանալով միայն անցյալից տեսնելով:

գլխաւորին, իրանց էմիրներին և չէլիներին միջից, իսկ յետոյ թիւրք կառավարութիւնը վերադրեց այդ կարգը և ինքը սկսեց նշանակել զայնմադա-նրանց վրա: Մինչև այժմ էլ դրուշներին մօտ պահպանված են հին կազմակերպութեան հետ-քերը: Այդ կազմակերպութիւնը հասարակապե-տական է, սակայն հիմնված տոհմերի առաջնու-թեան և ներկայացուցչութեան վրա, ինչպէս այդ նկատում է, օրինակ, և քիւրդերի մէջ:

Գրուշները սակաւապէտ և աշխատասէր ժո-ղովուրդ են: Իրանց ներքին ազգային գործե-րում համերաշխ են և արդարութեան նախան-ձախդիր: Սակայն օտարների վերաբերութեամբ, նայած հանգամանքին, նրանք փոխում են ի-րանց վարմունքը, երբեմն յարմարվելով նրանց և ցոյց տալով իբրեւ կրօնակից և մտերիմ, եր-բեմն կատաղի կոխ մղելով և անուրի գործեր թող տալով իրանց: Կենսից սովորական ընթաց-քում դրուշները խաղաղ են և ունեն անուրիքի վարվողութիւն, իսկ պատերազմի մէջ նրանք անխնայ են և զաղաւարտարով: Կիրք չառ մեծ յարգանք է վայելում դրուշներին մէջ և յայտնի է իբրեւ աշխատասէր տանը և քաջ՝ կենսից բա-ցառիկ դէպքերում:

Գրուշները առհասարակ կրում են զէնք, որը նրանք ամբողջում են մէջքին կապած կաշուէ գօտի: Վրա նրանց զգեստը մի երկար բրդեայ շապիկ է և լայն վարտիք, շապիկը վրա հագնում

Մի նոր վայրենութիւն: Այս օրերս Մինսկ ջաղաքում, տեղական լրագրի խմբագրի վրա յարձակում գործեցին 10 հոգի: Միայն կողմնա-կի անձանց միջամտութիւնը և օգնութիւնը ա-զատեց խմբագրին ծանր դժբաղդութիւնից: Ռուս խմբագիրը դատարանին է դիմել իր վրա յար-ձակվողներին պատժելու համար: Յանցաւորնե-րը յարձակվել են զիշեր ժամանակ, ծածուկ, գողտնի կերպով: Հաղորդելով այդ անախորժ դէպքի մասին, «Новое Время» լրագիրը նկա-տում է. «Բուռնցքը մամուլի ներկայացուցչին-րի դէմ վերջին ժամանակներս միանգամայն խրօնիկական ընտրութիւն է ստանում, ամե-նից զուգուցին այն է, որ գողտնի կերպով յե-տեից յարձակվող քաջերի մէջ, պատահում են այսպէս կոչված «խոտիկիզներ» հասարակութեան պատկանողները եւ...»

Հանգուցեալ կոսմուհի Գլխաւորի կտակած 48,000 ռուբլի դրամաւորով վեց նոր ստիպե-ղաներ են հաստատվում Լազարեան ճեմարա-նում:

Սընախի գաւառի Շիրակ կոչված անապա-տում, ճանապարհորդների և տեղական տաւարա-պահների ասելով, սկսել են յաճախ պատահել վիրապօծեր: Նրանցից մէկի փորում, օրինակ, գտել են մի ամբողջ գառ:

Ա.Լ.ԲԱՍՆԱՐՈՎՈՎԻՅ մեր թղթակիցը գրում է. «Վերջնապէս մեր ջաղաքային ինքնակալութեան գործն էլ մասն. գործնական չըլլանի մէջ: Մի քանի օր առաջ ստացվել է մինիստրի կողմից վաւերաց-րած ձայնաւորների ցուցակը: Ի դէպ, «Մշակ» № 72-ի մէջ Ալեքսանդրօպօլից հաղորդած այն լուրը, թէ մեր գաւառապետը դիմել է ուր հարկն է և խնդրել, որ մեր ջաղաքում ինքնա-կալութիւն չը մտցվի ջաղաքի աղքատ ու-թիւն և ան պատճառով՝ անհիմն է և սխալ: Պատիւ ունենք յայտնելու յօդուածագիրին, որ Ալեք-սանդրօպօլ ջաղաքը աղքատ չէ. նա եկամտի անաղքատ աղքատներ ունի: Եւ ինչպէս կարող էր գաւառապետը մի այդ տեսակ առաջարկութիւն անել, երբ մեր ջաղաքապետական տասնակ հա-զար ռուբլիները նոյն գաւառապետի գիտու-թեամբ պահվում են միայն ինքնակալութեան նախնական ծախսերի համար:»

ԲՈՐԺՈՒՄԻՅ մեզ գրում են յուլիսի 3-ից. «Այ-սօր Բուխարայի էմիր Միր-Մէլի-Միր-Արդու-Ա-խադ-խան» իր ժառանգի և ավիտայի հետ Թիֆ-լիսից հասաւ Բօրժօմ: Բօրժօմում էմիրի կառ-քի առաջից գնում էր ձիաւորների խում-բը զրօշակով: Էմիրի հետ կառքում նստած Մեծ Իշխան Նիկօլայ Միխայլովիչ: Էմիրը ի-ջաւ Մեծ Իշխանի ամարանդում: Ուղիղ ժամի 6-ին էմիրը Մեծ Իշխան Նիկօլայ Միխայլովիչի հետ ուղևորվեց դէպի Լիւնան:

են կարճ բաճկոնակի վերաբերում մասնակալա-նեի մէջ ընդունված աղան է: Գլխաւորին փա-թաթում են շալմաներ: Ժողովրդի պարապմունք-ներն են՝ հողազորութիւն, այգեգործութիւն, գինեգործութիւն, ծխախոտագործութիւն, չերա-մապահութիւն, մեղուաբուծութիւն, ձիթեղա-գործութիւն, լեռնային տեղերում՝ անասնապա-հութիւն:

Այդ ժողովրդի մէջ վերջին ժամանակներս սկսեցին երկալ կրթված մարդիկ, որոնք յորդո-րում են ժողովրդին կրթութիւն տարածել աղ-գի մէջ: Նոյն իսկ «Երիտասարդ Թիւրքիայի» զլխաւոր գործողներից մէկը ծագումով դրուշ է: Գրուշները, ինչպէս վերեւ ասեցինք, հաշտ և համերաշխ էին ապրում իրանց հարեան մարո-նիտ քրիստոնեաների հետ: Սակայն, թիւրք պաշտօնականներ ինտրիգների շնորհիւ, այդ եր-կու վարդին բարեկամ ազգութիւնները այս դա-րի քառասուն թվականներին սկսեցին միմեանց հետ թշնամանալ և ունեցան այնպիսի լուրջ ընդհարումներ միմեանց հետ, որ 1847 թվակա-նին հարկաւոր եղաւ եւրօպական պետութիւն-ների միջամտութիւնը, իսկ 1860 թվականի կա-տաղի ընդհարումները միջոցին կոտորակցին մինչև 13,000 քրիստոնեաներ, կոտորածի հեղի-նակները, որոնց մէջ թիւրք զինուորները նշա-նաւոր տեղ են բռնում պատմի, ենթարկվեցին Ֆրանսիացիների կողմից, որոնք Եւրօպայի ա-

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Միացեալ-Նահանգների հանրապետական կու-սակցութեան ազգային համաժողովին մէջ քուէ-արկվել է և ընդունվել հետեւեալ յայտարարու-թիւնը. «Հայաստանի կոտորածները Ամերիկայի ժողովրդի խորին համակրութիւնը ու արդար զարդովը յարուցած են և կը հաւատանք, թէ Միացեալ Նահանգները պարտաւոր են գործա-ծել իրանց բոլոր ազդեցութիւնը այս խժոճու-թիւններին վերջ տալու համար: Թիւրքիայում ամե-րիկացի ընակիչները ամենամանր փոխանցների նշաւակ դարձած են և ամերիկեան ստացուած-ները չիք են դարձած: Այնտեղ և ամեն տեղ ամերիկեան քաղաքացիները և ստացուածները պէտք է բացարձակապէս պահպանեն ինչ գնով և լինի:»

Գլխաւորն նորից մի նամակ է տուել անգլիա-կան լրագրիներում հայոց հարցի առիթով, որի մէջ հետեւեալն է ասոււմ.

«Ոչ որ սուլթանի և նրա գործիչների դէմ չէ գործածում այն սաստկութեան կէտը, որով պէտք էր խօսել: Նրանց մեղքը ամեն սահմանից ան-ցել է, ուստի նրա նկարագրութիւնն էլ պէտք է ամեն սահմանից անցնէ: Իմ ընտրութիւնս այս է՝ կամ ուժեղի կերպով դատաւարաւ ամեն բան, կամ կատարեալ լռութիւն պահել, որովհետեւ իմ լեզուս վերացականօրէն կարող է նուիրվել բարկութեան, թէպէտ բոլորովին պաղարին լի-նէր: Եւ լուս կը մնամ միայն որպէս դի մնամ չը հասցնեմ Եւրօպական միտքը մի ընդունելի չեմբանք է որոնում իր խաղաղութիւնը պատրուակելու համար: Ես չեմ կամենում հայ-թայթել այդ պատրուակը:»

«Temps» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը հաղոր-դում է, որ վանոււմ գոյութիւն ունի մի գաղտ-նի մասնաժողով, որ կազմում է ազգային մի մեծ ընկերութեան մարդ. ընկերութիւնը ամեն տեղ հիւղեր ունի: Այդ ընկերութիւնը կրում է ֆէդերատիվական կուսակցութեան անունը և ունի իր սեփական օրգանը, որ մեծ ազդեցութիւն է գործում զէպքերի վրա:

Անգլիական համայնքների ժողովի յուլիսի 3-ի նիստի մեծ մասը ներկայացնում էր Կրեմլի և մա-սամը փոքր-Ասիայի գործերին: Ժողովի արձա-նագրութիւնից բերում ենք հետեւեալ կտոր-ները:

Մօնկ. «Մենք տեղեկանում ենք, որ Թիւր-քիան գործեր է ուղարկում դէպի Կրեմլ փոքր-Ասիայից, որտեղ այդ նոյն զինուորները կատա-րեցին սարսափելի կոտորածներ. Ուրֆայի մայր եկեղեցիում այրեցին մինչև 2500 անձ և աւերե-ցին ու կողոպտեցին ամբողջ գիւղը՝ բռնաբա-րելով կանանց և կոտորելով երեխաներին: Ար-նունով դուրս եկան իրանց նաւերից ծովեզըը, և զսպելով վայրենի կոտորածները, խաղաղու-թիւն և կարգ հաստատեցին Լիւնանում, ար-տօնութեան պահանջները, այգեգործութիւն, աղքատները համար քը-քնակութեան և նշանակելով նրանց համար քը-րիստոնեայ նահանգապետին ինչպէս յայտնի է, առաջին նահանգապետն էր Գաուդ-Կալա:

Գրուշները այժմ հաշտ են մարօնիստների հետ և իրանց պահանջները անում են երկու տար-րերի անունից: Նրանք յոյս ունեն, որ այս ան-գամ նրանց դատը չի կորչի և կը տանի իր յաղթանակով, աղաւաղելով նրանց երկիրը թիւրք պաշտօնականների կամապականութիւնից: Նրանք բաժանվել չեն ցանկանում Թիւրքիայից: Նրանք այնքան սակաւաթիւ են, որ այդ տեսակ ցնորք չեն էլ կարող անուցանել իրանց զուգանքները: Նը-րանք ցանկանում են, որ Թիւրքիան ունենայ գերիշխանութիւն, վերջինի տուրքեր, բայց չը խառնվի նրանց ներքին վարչական, տեղական գործերի մէջ:

Ժամանակի իր յաղթանակը տանում է: Ախա-վայրենի գրուշները այսօր գիտակցաբար կոխ են մղում օսմաններին դէմ և պահանջում են այն, ինչ որ ամեն մի ժողովրդի կանօնաւոր դար-գացման և առաջադիմութեան պայման է: Եւ անկախած առաջան նրանց է, իմէ ոչ այսօր, դռնէ մօտիկ ժամանակում:

Ն—

դեօք այդպիսի դօրքից կարելի է օգնութիւն ստանալ (լսեցէք, լսեցէք): Կարող են մեր երկրի կառավարութիւնը կամ մեծ պետութիւնները որ և է հաւատ ունենալ զէպի սովորներն խոստովանել: Ի հարկէ, մեզ կը պատասխանեն թէ թիւրքերն չէ համաձայնում:

Կըրդօն. «Հաւանական է, որ թիւրքաց զօրքի մի մասը Հայաստանից է. բայց նրանց յատկապէս վերադարձ յանցանքները, իմ կարծիքով, հնարավոր են: Անկարելի է, որ նրանց պատուիրած լինէին կոտորածներ անել Հայաստանում»:

Ի էյդ. «Թէի աւելի լաւ կը լինէր, որ եւրօպական պետութիւնները միասին գործէին, եթէ այդ կարելի է, սակայն Մեծ-Բրիտանիան չը պէտք է թող տայ կոտորածներ և այդ պատճառով պարտաւոր է միայնակ գործել»:

Կըրդօն. «Եւ շատ կը ցաւէի, եթէ ընդունված լինէր պ. Ղեյզի առաջարկած քաղաքականութիւնը: Եւ հաւատացած եմ, որ եթէ Անգլիան վերջին իր վրա պատասխանատուութիւնը դա կործանիչ և վտանգաւոր կը լինի թէ Կրեւէի, թէ Յունաստանի և թէ Նոյն իսկ ամբողջ Եւրօպայի համար: Կան մարդիկ, որոնք շատ առատաբար են ուրիշի սեփականութեան վերաբերութեամբ և նոյնպէս սովորների կայունութեան վերաբերութեամբ: Սակայն մեր ժողովում կան այնպիսիները, որոնք շատ հեշտ կերպով փոխում են, ըստ տրամադրութեան, Եւրօպայի քարտէզը»:

Ստեփանն օն. «Ինչ տեղեկութիւններ կան Դիարբեքի, Խարբեքի և Վանի մասին»:

Չաննիսի. «Վեր կառավարութիւնը պէտք է աւելի համարձակ քաղաքականութեան հետեւի, քան նա այդ անում է. Սլոբոքի սխալը Հայաստանի վերաբերութեամբ մեծ ցաւ է պատճառել մեր երկրի մարդասիրութեան բարեկամներին»:

«Новости» լրագիրը, Թաւրիզի վրայով հետեւել տեղեկութիւններն է ստացել Վանի մասին. «Չանաղան աւելիւմ գիւղերից փախած մօտ 10 հազար բնակիչները թշուառ կեանք են վարում և ապրում են ողորմութեամբ: Չը նայելով, որ գիւղացիների գեանափոր կացարաններում էլ ոչինչ չէ մնացել, բայց դարձեալ աւազակային խմբերի երեսպը սարսափ է աղղում քաղցած աղգաբնակութեան վրա: Առետուրը գրեթէ կանգ է առել: Այնանը ի նկատի պէտք է ունենալ սով, որովհետև ոչ մի միջոց չը կայ քանքները հաւաքել: Վերջին դէպքերը ստեղծել են այնպիսի վիճակ, որ ուղղակի շատացնում են այսպէս կոչված «կան-ֆիդաների» (ինքնազոհների) թիւը, որ այժմ հազարաւոր է: Դրանք այն մարդիկն են, որոնք զրկված են իրանց ընտանիքից, աղգաբնակներին, գոյքից և սպասում են այսօր վաղը ենթարկվել նոյն վիճակին, որին ենթարկվել են իրանց եղբայրները»:

ՔԱՂՈՒՍԾՔՆԵՐ Կ. ՊՈԼՍԻ ԼՐԱԳԻՐՆԵՐԻՅ

«Մուշի Ս. կարապետի վանքը, որ հետզհետեւ տեղի ունեցած երկրաշարժներէն արդէն բաւական շնորհակալ վիճակի մը հասել է անցեալ ապրիլ ամսու անձրևներուն պատճառով: Վանքին ներքին պատերուն մէկ մասը, ժամանակակից վարժարանին հին ուսումնարանը, առաջնորդարանի յարակից շէնքերը, ակոռներ, մարաքներ և այլն, ամբողջովին փեր են: Միաբանութիւնը տեղեկացրով մը Պատրիարքարանի ղեմած ու վանքին աւերակ վիճակը յայտնելով դարձան խնդրած է: Մուշին կը գրեն թէ վանքին մնացած մասերն ալ փչելու վտանգին մէջ են, եթէ անմիջապէս գտնէ մասնակի նորոգութիւններ չը կատարուին»:

«Այնպէստալի բաններ կը պատմուին իսմիրեան մրցանակին բաշխումը ըլլալուն մասին: Ոմանց նայելով, յանձնաժողովը նիստ ըրեր է և մրցանակները բաշխել է, առանց ընտելութիւն մը ընելու: Ուրիշներ կըսեն թէ նիստ գումարուած չէ ընաւ, այլ յանձնաժողովին մէջ անգամը իր ամէն մէկ ընկերներուն մօտը գացել է, և այնպէս, առանց օրինաւոր նիստի, օրոյումներ տըլած են: Այդքանը ամենուն յայտնի է թէ մրցանակ բաշխելու ժամանակը հասած է, և թէ մինչև հիմա այս գործին վրա չը տեսնուեցաւ լրագիրներու մէջ ծանուցում մը նման անոր,

որ ամէն տարի կը հրատարակուէր ինչու այս լուսնիւնը: Ինչու մասնաժողովը չուէր յայտնել որ անձին տուաւ և ինչ մրցանակ տուաւ»:

«Կախաղան: Հեղեոնադատ տեսանը մահուան դատաւարութեամբ էր կոչկար Առաւուրեան Գալուստը, որ ամբաստանուած էր թէ սպաննած է Կէտիկ-Վաշա իր տանը առջև տպագրական տեսչութեան քարտուղարներէն եղկատցի Համբարձում էֆէնտին: Մահու պատիժին գործադրութիւնը տեղի ունեցաւ չորեքշաբթի առտու, ժամը 10-ին միջոցները, նոր կամուրջին Ստամպուլի կողմը, ուր կախաղան հանուեցաւ Գալուստը»:

ՄԱԿ-ԿԻՆԼԵՅ

Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահութեան թեկնածու Մակ-Կինլէյ պաշտպան է ամերիկեան չօվանս աւոյրող քաղաքականութեան: Նրա ծրագիրներով օտար ապրանքները պէտք է ենթարկվեն մեծ մտքների, որպէս զի նրանք չը կարողանան իրանց էֆանութեամբ մրցել տեղական ամերիկական արդիւնների հետ: Ճիշդ է, այդ մտքների պատճառով ապրանքները թանկանում են և նրանց սպառողը, որ աղգաբնակչութեան մեծամասնութիւնն է, ստիպված է աւելի փող ծախսելու առօրեայ պիտոյքների ձեռք բերելու համար, սակայն ամերիկական գործարանատէրը, ապրանքներ պատրաստողը միջոց ունի շահաւէտ կերպով բանացնել իր գործարանը և արհեստանոցը, լայնացնել արդիւնաբերութիւնը և դուրս վաճառել օտար արդիւնաբերութիւնը և ապրանքները:

Մակ-Կինլէյ ամենաջերմ պաշտպաններն են առետրի և արդիւնաբերութեան ներկայացուցիչները, Միացեալ Նահանգների հարուստ մասը: Պաշտպան են երբեմնապէս և բանւորների ներկայացուցիչները, որոնք վախենում են, որ մաքսերի բարձրան պատճառով չը լինի թէ փակվեն գործարանները կամ նուազի նրանց արդիւնաբերութիւնը և այդպիսով բանւոր դասակարգը զրկվի իր աշխատանքի աղբիւրից: Սակայն ժողովրդի մեծամասնութիւնը սաստիկ ճնշվում է այդ մաքսերից և յաճախ գանգատ է յայտնում նրանց անյարմարութեան համար: Մակ-Կինլէյ իր ծրագիրներով ցանկանում է արդիւնաբերութեան սակարկումը ցոյց տալ իրան իբրեւ հայրենասէր, պաշտպան ամերիկական արդիւնաբերութեան:

Արտաքին քաղաքականութեան մէջ Մակ-Կինլէյ երկրպագու է Մոնրօթի սկզբունքին՝ «Ամերիկան ամերիկացիների համար»։ Ներկայ քաղաքական կնճառ հարցերում, ինչպէս են Վենեսուելայի և Կուբա կղզու հարցերը, նա հակված կը լինի դրանց ջերմ պաշտպան լինել և եթէ խիստ քայլեր չի անի այդ ուղղութեամբ, միայն չորհրդի այն բանի, որ նա պէտք է աչքի առաջ ունենայ իր նախորդի սկսած բանակցութիւնները:

Մակ-Կինլէյ հանրապետականների թեկնածուն է. իսկ նախորդ նախագահ Կլիվլենդ պատկանում է դեմոկրատների կուսակցութեան:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՅ

Կ. ՊՈԼԻՍ, յունիսի 25-ին

Այս անգամ կը զրկւի ձեռք լրագրական հատւածներ, հատուածներէն երկուքը կը վերաբերին իսմիրեանի գրական մրցանակին, յանձնաժողովը այս տարի իր ըրածին թողածին վրա խորին լուսնիւն մը կը պահէ, չը գիտենք ինչ նպատակով: Կիմանանք որ Ալվադան Աբրահամին,—ծանօթ կրթական առաքեալ,—գործը վարձատրել են 20 ոսկով: Ալվադան զոր, բանասիրութիւնը զոր կը խնդրենք որ ձեր տեսութիւնները լիովին ընէք այս առթիւ «Մշակին» մէջ և չը թողուք որ արդեան ազնիւ գործը աշուտ ամարգիւր ձեռք մնայ:

«Կախաղան» վերնագրով հատուածը պարզ է. բուն սպանիլը չէ կախաղան, այլ անոր ընկերը, ինչպէս խոստովանած է նաև ոստիկանութեան պաշտօնեայ Հիւանի պէյ: Ասոր հետ բաղդատեցէք «Ներում» հատուածները. Սուլէյմաններ, Մուստաֆաներ, Բանալօներ, որոնք ստորին կարգի ոճրագործներ են, «Կախաղան» ներման» կարժանանա, մինչդեռ հայը բողոքովին անմեղ ըլլալով մէկտեղ կը կախուի: Գալով ոճրագործ

խորհրդի, գրած էի ձեռք արդէն, որ այդ մարդը պաշտպան կինրուս կողմէն սպաննած էր այդ իտալացին (Ռաֆայէլը), ինչպէս նաև Քամէլիան և ուրիշ աղջիկ մը. 15 տարուան բռնի աշխատութեան դատաւարութիւնէն ետքը, անցեալ օր «Կախաղան» ներման» արժանացաւ, ինչպէս կը տեսնէք:

«Պետական հաստիքներ» հատուածէն կը տեսնէք թէ կառավարութիւնը, որ սկսած է անանկանալ, ողբիլը ըմպելիներու և սիկառէթի ու խաղի թղթերուն կը փարի, անոնցմէ առնուելիք տուրքերուն չորհուրէն իր գոյութիւնը քաջաբար համար:

«Մուշի վանքին» վերաբերածը պարզ է. վանքը քայքայման մէջ է. թուրքերուն չորհուրէ, որոնք հայոց վանքերը և եկեղեցիները քանդելն են ետքը, անամթաբար «հայոց կողմէն իրենց աւրուած մեղքները կանգնելու համար» հանգանակութիւն քայքած են:

Պ—ի

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՅ

Թաւրիզ, յունիսի 19-ին

Մուշաֆարէղին Շահը թագաժառանգ է կարգել իր անդամիկ որդի Մամադ-Ալի-Միրզային, հակառակ պարսից արքունիքի ժառանգական օրէնքին, որովհետև այդ օրէնքի համաձայն թագաժառանգ պիտի կարգվէր Շահի փոքր որդին, քանի որ իսկապէս նա էր արքունական ցեղից սերած և ոչ թէ Մամադ-Ալի-Միրզան: Սակայն սա մի լաւ ապացոյց է, որ նոր Շահը հետեւում է եւրօպական կարգերին ու օրէնքներին, որով նա կամենում է չարժանակել իր հօր սկսած գործը:

Անցեալներում Շէյխ Չէմալէղինին, իր երկու ընկերների հետ, շրջապալալ բերելով Թաւրիզ, տարան Թէհրան: Այդ մասին դեռ եւ մանրամասնութիւններ պակասում են:

Յունիսի 17-ին հեռագիրը հաղորդեց, որ Վանում սկսվել է կոտորած. 1.000 հողի հայեր վախչելով՝ ապաւինել են Պարսից սահմաններում, սակայն այդտեղ էլ նրանց պաշարել են քրդերը: Երկու կողմի մէջ տեղի է ունեցել սաստիկ կոտորած:

Երէկ քաղաքում պաշտօնապէս յայտարարվեց բոլոր կենսական միջոցների էֆանութիւն և նշանակվեց իւրաքանչիւր ապրանքին էֆան գին:

Այս օրերս Թաւրիզում 15 տարեկան մի հայ աղջիկ, որ դուրս է հօրից և սովել ու մեծացել է մի վատ վարքի տէր մօր ձեռքի տակ, իր սիրահար պարսիկ երիտասարդի հետ փախչելով՝ ապաւինեցին մուշաէիլի տունը: Հայր Սարահանը բողբոջեց դրա դէմ, իսկ մուշաէիլը պատասխանեց թէ—մուշաբէյի օրեր լինելով՝ չեմ կարող աղջկան վերադարձնել. սպասեցէք երեք օր և այնպէս եկե՛ք տարեք: Անցած երեք օրը ու դրա կրկնապատիկը, բայց աղջիկը դեռ չէ վերադարձել իր տունը:

Մի աւելի տոկալի ոճիր, որ կատարվեց զրանից մի օր յետոյ, անմիջապէս ժողովրդին մոռացնել տուեց այդ դէպքը: Մի օտարական վաղուց բռնաբարած լինելով 20 տարեկան մի աղքատ օրիորդ՝ առարկելով որ վերջը պիտի ամուսնանայ նրա հետ, պատճառ է դրածում մի սոսկալի ոճիրի: Հայրը նկատելով, որ իր աղջիկը արդէն յղի է, մտածում է մի կերպ աղաւթել խաղաղակ լինելուց. նա վճռում է թունաւորելով սպանել իր աղջկան. նա թոյն է տալիս աղջկան՝ խաբելով թէ այդ ծննդաբերութիւնից աղաւթելու դեղ է: Աղջիկը խմում է և անմիջապէս մեռնում: Ամբողջ քաղաքը զրդաց այդ դէպքի պատճառով: Բայց ինչ կարող էին անել: Օտարականը հասկանալով բանի էությունը, արդէն ահիստացել է քաղաքից:

Արշակունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Յրանխական նախկին մինիստր, յայտնի Բրոյլի դուքսը նորերս մի յօդուած է հրատարակել «Revue des Deux Mondes» հանդէսում, որով աշխատում է ցոյց տալ, թէ Ռուսաստանի հետ դաշնակցութիւնը այնքան էլ օգտակար չէ Յրանխային և Յրանխան չը պէտք է հետեւի այն քաղաքականութեան, որ վարում է Ռուսաստանը արևելքում: «Արևելեան քրիստոնեաները, ասում է դուքսը, աւանդաբար վայելում

են Յրանխայի պաշտպանութիւնը և չէ կարելի մեղանից պահանջել, որ մենք նրանց զոհենք»:

—Լօնդօնի հրէաները մեծ համակրութիւն են ցոյց տալիս զօկտօր Գէրցլին, որ այժմ ագիտացիա է անում Պալեստինում անկախ հրէական պետութիւն ստեղծելու համար: Գէրցլի կարծիքով, Պալեստինը կարելի է ձեռք բերել այդ նպատակի համար թիւրքաց կառավարութեան հետ ուղղակի բանակցութեան մէջ մտնելով: Մակաբիացիների ընկերութիւնը մի առանձին յանձնաժողով է նշանակել Գէրցլի ծըրքադիր մանրամասն ուսումնասիրելու և իրագործման միջոցները ցոյց տալու համար:

ԽԱՌԵ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս Անգլիայում, Ռէլստում, տեղի ունեցաւ մի նոր համալսարանի բացումը: Բացման առիթով տրված հացիկոյթի ժամանակ Գլաուստօն մի ճառ խօսեց, որի մէջ բացատրեց համալսարանների նշանակութիւնը մեր ժամանակի համար: Հառախօսի կարծիքով, համալսարաններ լի լիաւոր պաշտօնը պէտք է լինի ընդդիմադրել հարստութիւնը դիզելու բացարձակ ձգտման: Հարստութիւնը, ասեց նա, լաւ սպասաւոր է, բայց վատ խորհրդակալ: Անդադար նիւթական շահերի հետեց ընկնելը մեր ժամանակի համար ամենամեծ սօցիալական և հոգեկան վտանգ է ներկայացնում: Նորաբաց համալսարանի կանցիլէր ընտրվել է Ռէլսի պրինցը, Անգլիայի գահաժառանգը, իսկ Ռէլսի իշխանուհին համալսարանի խորհրդի հենց առաջին նիստում ընտրվել է երաժշտութեան զօկտօր: Նոր համալսարանը կարող են մտնել և կանայք:

Անգլիական «Longman's Magazine» ամսագրի յունիսի տետրակում յայտնի գիտնական Մաքս Միւլլերի կինը հրատարակել է մի յօդուած, որի վերնագիրն է «Նամակներ Թիւրքիայի մասին» (Letters on Turkey): Տիկին Միւլլերը մի քանի տարի սրանից առաջ Կ. Պոլսում սիրալի կերպով ընդունվեց սովորների կողմից՝ իր ամուսնու և որդու հետ միասին: Յօդուածի մէջ նկարագրված են պաշտպանական կեանքի մի քանի կողմերը, թանգարանները, գրադարանները և այլն: Մի ուրիշ անգլիական հրատարակչութեան մէջ «Scottish Geographical Magazine» ամսագրի մայիսի համարում կապիտան Մանսիլ տպագրել է մի յօդուած՝ Հայաստան և Թիւրքիա Աֆիայում անունով:

Կոմս Լէվ Տօլստոյ մի նոր վէպ է գրել, որը այս օրերս հրատարակվեց Լօնդօնում առաջին անգամ՝ անդլիերէն թարգմանութեամբ: Վէպի անունն է «Կիւսկի», իսկ նիւթը հետեւեալն է. «Մի խեղճ աղջիկ, որին մի դատաւոր մոտրեցրել էր և յետոյ երեսի վրա ձգել, ընկնում է ծայրահեղ աղքատութեան մէջ և մի քանի տարի անցնելուց յետոյ, գործում է մի յանցանք, որի համար ենթարկվում է դատաւարանի: Գատաւորը մեղադրված աղջկայ մէջ ճանաչում է իր զոհին. նրա խղճմանը սկսում է տանջել նրան և վերջ ի վերջոյ նա ներողութիւն է խնդրում աղջկանից և ամուսնանում նրա հետ»:

Լրագիրները հաղորդում են, որ յայտնի դրամատէր, այժմ վախճանված բարոն Հիւրի Կարլին, որը իր ամուսնու ահագին հարստութեան իսկ ժառանգուհին է, յայտնել է, որ ինքն այլ եւ չէ խառնվելու այն ընկերութեան գործերին, որը նպատակ ունի Ռուսական հրէաներին գաղթեցնել: Արդէնայինեան հանրապետութեան երկիրը և նուիրել է այդ ընկերութեան գաղթականական գործին առաջ տանելու համար՝ հարկը միլիոն ֆրանկ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՅ

ՎԼԱԴԻՄԻՐ ՍՈՍՈԿ, 2 յուլիսի Եփօնմայից հաղորդում են, որ ծովային մինիստրութիւնը եռանդուն կերպով պատրաստում է նաւատորմը պատերազմի համար, հաւաքում է անհրաժեշտ պաշարները: Մինիստրութեան գործունէութիւնը բացատրվում է նրանով, որ կառավարութիւնը ցանկանում է պատրաստ լինել ամեն պատահականութեան դէպքում: Ամենքը անհամբեր սպասում են, որ հրատարակվեն կորէյական հարցի առիթով ուսաց կառավարութեան հետ եւապոնական արտակարգ դեսպանի բանակցութիւնների հետեւանքները:

ՊԱՐԻՅ, 2 յուլիսի: Յուլիսի 1-ին ժամանեց Լի խուճ Չանը: Կայարանում զինուորական պատիւներ տրվեցին նրան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 յուլիսի: Թագաւոր Կայսրը բարեհաճեց հրաժեշտի ունկնդրութեան ընդունել արտակարգ դեսպան և լիազօր մինիստր Խուսուանգին, Նոյնպէս և այն անձանց, որոնք զբոսնում են կորէյական արտակարգ միսիայի մէջ: Ներքին գործերի մինիստր օրոշեց արգելել «Тражданин» լրագրի հատով վաճառելը: Կայսերական թատրոնների զինկեցիան պա-

Типографія Бяцел. Главн.нач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. кар.